



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 09 » _____ 11 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/ - 483

Նոյեմբերի 2-8-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Նոյեմբերի 3-ին, 4-ի գիշերը, 6-ին, 7-ի գիշերը շրջանների զգալի մասում դիտվել է անձրև: Տեղումների առավելագույն գումարային քանակը Արարատում գրանցվել է 35մմ, Ամասիայում, Գյումրիում, Աշոցքում՝ 27-29մմ, Ֆանտանում, Հրազդանում, Ստեփանավանում՝ 23-25մմ, Դիլիջանում, Տաշիրում, Մեղրիում՝ 20մմ, մնացած շրջաններում՝ մինչև 15մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում բարձ է եղել նորմայից 3-5, նոյեմբերի 8-ին՝ բարձր 1-2 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է նոյեմբերի 2-ին և դիտվել է Սյունիքի հովիտներում $+26...+28^{\circ}\text{C}$, Լոռիում, Տավուշում, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի նախալեռներում՝ $+19...+24^{\circ}\text{C}$, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ $+12...+18^{\circ}\text{C}$ աստիճան տարբայուն:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է նոյեմբերի 8-ին և դիտվել է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Սյունիքի նախալեռներում՝ $-2...+3$, Լոռիում՝ $0...+5^{\circ}\text{C}$, Տավուշում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ $+1...+6^{\circ}\text{C}$, Սյունիքի հովիտներում՝ $+5...+8^{\circ}\text{C}$:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1 սմ-ով և կազմել՝ 1900.58մ (08.11.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 7 սմ-ով:

Տնօրենի ժ/պ՝

Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ
Գագիկ Սուրենյան, Հեռ.՝ 012 31 79 29